

1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

1.1. Համախառն ներքին արդյունքի ցուցանիշը


Հայաստանի Հանրապետության համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) ծավալը 2000թ. հունվար-նոյեմբերին կազմել է 923660.5 մլն. դրամ: Դրա աճի տեմպը կազմել է 105.0 տոկոս՝ անցյալ տարվա նույն ժամանակաշրջանի 103.6 տոկոսի դիմաց:

ՀՆԱ-ի առաջընթացիկ հավելաճը (1.4 տոկոսային կետ) ընթացիկ տարում, նախորդ տարվա համեմատությամբ, հիմնականում պայմանավորված է ապրանքների և ներմուծման զուտ հարկերի աճի տեմպի (0.9 տոկոսային կետ) և շինարարության ճյուղի աճի տեմպի (0.7 տոկոսային կետ) հաշվին: Դրանց աճի տեմպը նախորդ տարվա համեմատությամբ կազմել է համապատասխանաբար՝ 10.9 և 7.8 տոկոսային կետ:

Դիտարկվող ժամանակաշրջանում ՀՆԱ աճը հանրապետությունում հիմնականում պայմանավորված է տնտեսության հիմնական ճյուղերում ավելացված արժեքի հավելաճով. արդյունաբերությունում՝ 4.4 տոկոս, շինարարությունում՝ 27.3 տոկոս, առևտուր և հանրային սննդում՝ 7.2 տոկոս: Դրա հետ մեկտեղ, հարկ է նշել, որ ՀՆԱ-ի աճը որոշ չափով դանդաղել է գյուղատնտեսության ճյուղի ավելացված արժեքի աճի տեմպի նվազման հաշվին, որը պայմանավորված է անբարենպաստ կլիմայական պայմաններով (երաշտով):

ՀՆԱ-ի 105.0 աճի տեմպի պայմաններում ընդամենը հանրապետության ավելացված արժեքի աճը, հիմնական գներով¹, այսինքն, առանց հաշվի առնելու ապրանքների և ներմուծման զուտ հարկերի (առանց սուբսիդիաների) գործոնը, կազմել է 104.5 տոկոս: Ապրանքների և ներմուծման զուտ հարկերի (առանց սուբսիդիաների) աճի տեմպը կազմել է 109.9 տոկոս, որի հաշվին ապահովվել է ՀՆԱ հավելաճի 0.9 տոկոսային կետը:

ՀՆԱ-ի աճի տեմպի դինամիկան
(տոկոսներով նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ)



¹ Հիմնական գներով տվյալները բերված են հաշվի առած ֆինանսական միջնորդության անուղղակիորեն չափվող ծառայությունները: